# ԿԱՐԾԻՔ

*Տաթևիկ Վարդանի Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» խորագրով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մայրենի)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար*

Հաղորդակցումը ոչ միայն լեզվամտածողության դրսևորում է, այլև հասարակության մեջ ապրելու, բնականոն կենսագործունեություն ապահովելու կարևոր պայման: Ճիշտ հաղորդակցումը վկայում է խոսողի լեզվազգացողության, ճանաչողական կարողությունների, խոսքի ոճական, գործառնական, գեղագիտական արժեքի ընկալման մշակույթի, խոսքային գործունեության դրդապատճառների ձևավորվածության մասին: Հաղորդակցման կարողության ձևավորումը մանկավարժական գիտության և դասավանդման մեթոդիկայի բնագավառներում արդիական հիմնահարց է, որի կրթադաստիարակչական, սոցիալ-հոգեբանական, մշակութաբանական տեսանկյունները տակավին խոր ուսումնասիրման կարիք ունեն:

Այս տեսանկյունից գրախոսվող ատենախոսության արդիականությունը հիմնավորված է և պայմանավորված է չափորոշչահեն կրթության հարացույցում ծրագրային նոր պահանջներով սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդաբանական հիմնավորման անհրաժեշտությամբ:

Հետազոտությունն ունի սոցիալ-մշակութային, հոգեբանամանկավարժական կիրառական նշանակություն: Ատենախոսի մասնագիտական փորձը, տեսական վերլուծություններ կատարելու կարողությունը և գործնական հմտությունները հնարավորություն են տվել գիտատեսական ու մեթոդապես հիմնավորված հետազոտություն իրականացնելու, որն ուշագրավ սկզբունքներ և մոտեցումներ է նախանշում մայրենիի դասերին կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման հիմնախնդրի լուծման գործում: Հետազոտության հիմնահարցերը դիտարկվում են մանկավարժահոգեբանական,

լեզվաբանական, հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկայի արդի հիմնադրույթների համատեքստում:

Հստակ սահմանված են հետազոտության բաղադրիչները՝ նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, որոնք բովանդակային առումով համապատասխանում են և հիմնավորված արտացոլված են եզրակացությունների մեջ: Հիմնավորված է հետազոտության գիտագործնական նշանակությունը, հետազոտության արդյունքներն ունեն գործնական-կիրառական ուղղվածություն:

Ատենախոսության՝ «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման համակարգը (հիմնահարցի պատմություն)» խորագրով առաջին գլխում հանգամանալից դիտարկված են հաղորդակցական կարողությունների ձևավորման հիմնախնդրի պատմատեսական նախադրյալները: Վկայաբերված պատմաբանասիրական, մանկավարժագիտական աղբյուրները տեղեկատվական հարուստ նյութ են տրամադրել ատենախոսին, որոնցից նա գիտական բարեխղճությամբ հանգամանալից վերլուծել և մեկնաբանել է դեռևս անտիկ դարաշրջանից սկսած հաղորդակցական միջոցների, նշանային համակարգերի ձևավորման պատմատեսական հիմքերը: Հայ և արտերկրի լեզվաբանական, հոգեբանական, հոգելեզվաբանական, փիլիսոփայական-տրամաբանական, մանկավարժական հետազոտությունների հանգամանալից քննությունը բացահայտում է հիմնախնդրի կարևորությունը միջգիտակարգային առումով: Այնուհետև հարցի խոր և բովանդակալից ուսումնասիրությունը տեղափոխվում է տարրական կրթության ոլորտ, որը վկայում է ատենախոսի՝ հիմնախնդիրը բազմատեսանկյուն հետազոտելու կարողության ձևավորվածության մասին: Հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համակարգի բաղադրիչների և գործառույթների քննությունն ուշագրավ խորքեր է բացահայտում լեզվադիդակտիկական տեսանկյունից: Ատենախոսն անդրադարձել է խոսքային միջավայրի, ուսուցչի խոսքի և հաղորդակցման մշակույթի, կրթական գործընթացի սուբյեկտների փոխներգործության, հաղորդակցման դրդապատճառների ձևավորման խնդիրներին: Առաջին գլխում ատենախոսն անդրադարձել է նաև արդի թվայնացված իրականության մեջ տեղեկատվական միջավայրում հաղորդակցմանը, մեդիակրթության, մեդիայի ու մեդիատեխնոլոգիաների դերին, կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկություններին՝ առաջարկելով կառուցողական լուծումներ:

«Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի բովանդակությունը և դրա առանձնահատկությունները» խորագրով երկրորդ գլխում քննության են առնված տարրական դպրոցում հաղորդակցական կարողությունների ձևավորման նորմատիվային հիմքերը, որոնք ապահովում են չափորոշչահեն կրթության հարացույցում ծրագրային նոր պահանջներով սովորողների հաղորդակցական կարողությունների և վերջնարդյունքների ձեռքբերումն ըստ առաջադրված կրթաբաղադրիչների: Մայրենիի դասագրքերի բովանդակության քննությունը ևս բացահայտում է հաղորդակցման կարողությունների ձևավորման ներուժը՝ ուղեկցված արժեքավոր առաջարկություններով և մեթոդական հանձնարարականներով:

Հիմնախնդրի լուծման արդյունավետությունը, ինչ խոսք, պայմանավորված է ուսուցիչների շրջանում իրականացված հարցախույզի տվյալների վերլուծությամբ, որի արդյունքում ի հայտ են եկել դիդակտիկական, մեթոդական, մանկավարժահոգեբանական և ուսուցիչների վերապատրաստմանն առնչվող մի շարք խնդիրներ: Այս գլխում հանգամանալից վերլուծված են նաև կրտսեր դպրոցականների՝ հաղորդակցման կարողությունների ձևավորման հետ կապված կազմաբնախոսական, նյարդահոգեբանական, լեզվամտածողության, մտագործունեության մի շարք առանձնահատկություններ, նաև կենսամիջավայրի բաղադրիչներ ու գործոններ:

Ատենախոսը հաղորդակցական կարողությունների ձևավորումը դիտարկում է դպրոցականների բանավոր և գրավոր կապակցված խոսքի զարգացման, պատկերավոր լեզվամտածողության, համագործակցային կարողությունների զարգացման, լեզվական նյութի գործնական-հաղորդակցական բնույթի գիտակցված, մտահուզական ընկալման և բառապաշարի հարստացման, իմացական գործընթացների ակտիվացման, լեզվի ուսուցման և խոսքային գործունեության կապի ամրակայման, աշխարհաճանաչողության տեսանկյունից, որը հիմնախնդրային է տեխնոլոգիական հեղաշրջումների ժամանակակից աշխարհում:

«Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համալիրը մայրենիի դասերին» խորագրով ենթագլուխն ամփոփում է ատենախոսի մեթոդական զինանոցը և ընդգծում հետազոտության գիտամեթոդական արժեքը: Հիմնավորված է, որ հաղորդակցական կարողությունների զարգացման արդյունավետ միջոց են խոսքային իրավիճակները, էլեկտրոնային և փոխներգործուն խաղ-առաջադրանքները,

իրադրային խաղերը, համակարգչային ուսումնական թեմատիկ համալիր միավորները, մենախոսություն և երկխոսություն ներառող իրավիճակային կրթական խաղերը: Ներկայացված մեթոդական համալիրը՝ բովանդակային, տեխնոլոգիական և ընթացակարգային բաղադրիչների հստակ մշակմամբ, կոնկրետ հանձնարարականներով, բարձրացնում է ատենախոսության գիտամեթոդական արժեքը:

Ատենախոսության տեսագործնական դրույթների հիմնավորման վերաբերյալ իրականացված փորձարարական հետազոտությունը, կիրառված գործնական նյութերը աշխատանքի վերլուծական-գնահատողական ամփոփումն են: Կիրառված մեթոդական համալիրի արդյունքում սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը վերաբերող ուսումնասիրությունները և արդյունքների վիճակագրական վերլուծությունը՝ համապատասխան գրաֆիկական լուծումներով, փաստում են մշակված մեթոդական համալիրի մանկավարժական արդյունավետությունը և վկայում են ատենախոսի մեթոդամասնագիտական կարողությունների ձևավորվածության մասին:

Ատենախոսությունն արդիական հնչեղություն և կիրառական արժեք ունեցող ինքնուրույն, ամբողջական հետազոտություն է, վկայում է հեղինակի մասնագիտամանկավարժական, գիտահետազոտական աշխատանք կատարելու կարողությունների ձևավորվածության, գիտական բարեխղճության մասին: Մշակված առաջադրանքներն ու վարժությունները հետաքրքիր են, ինքնատիպ, ունեն ուսումնաճանաչողական և դաստիարակչական արժեք: Պահպանված են գիտահետազոտական աշխատանքի բովանդակային, կառուցվածքային, լեզվառճական կողմերին ներկայացվող պահանջները:

Այնուհանդերձ կուզենայինք առանձնացնել որոշ նկատառումներ.

1. Ցանկալի կլիներ հատկապես ՏՀՏ-ների կիրառմամբ էլեկտրոնային խաղ-առաջադրանքների իրականացման ուղղությամբ հոգեբանամանկավարժական, սոցիալական, կազմակերպական, առողջագիտական, կազմաբնախոսական, ֆիզիոլոգիական, տեխնիկական անվտանգության ապահովման առումով մեթոդական հանձնարարականներ մշակել, որը շատ օգտակար կլիներ ուսուցիչներին:

2. Շահեկան կլիներ, եթե կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման համատեքստում որոշ չափով անդրադարձ կատարվեր դասավանդվող այլ

առարկաների հետ ինտեգրվող թեմատիկ միավորների ստեղծման և այդ շրջանակներում հիմնախնդրի լուծման համար:

3. Կառուցվածքային առումով նպատակահարմար կլիներ 2.4. ենթագլխի՝ կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկություններին վերաբերող հատվածը զետեղել 1-ին գլխում՝ անջատելով գիտափորձի արձանագրման փուլին նվիրված շարադրանքից:

Մեր կողմից արված նկատառումներն ընդհանուր առմամբ չեն ազդում հետազոտության արժեքի և այն գնահատականի վրա, որին իրավամբ արժանի է աշխատանքը:

Տաթևիկ Վարդանի Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մայրենի)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Գ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. Հ. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՀ գիտքարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Մ. Մ. ԻՍՊԻՐՅԱՆ

18 10. 2023 թ.